ուրիշ երևոյթների մասին չենք ուզում կանգ առնել, նիւթից շատ չհեռանալու համար։ Նա թաղուած է Գէորգ եպիսկոպոսի գերեզմանին կից և վերան իւր գեղարուես-



(Պատկեր 11)

տասէր ճաշակի համապատասխան, ճարտարաքանդակ մի աւելի մեծ խաչարձան կանգնած, անկիւնաձև ճակատին «❋ Այս է հան|գիստ տր. Յո|հաննիսի» գրուած (*)։

թեան ժամանակ։ Հաղբատը պէտք է ունենայ իւր պատմութիւնը. ճարտարապետութեան, զարդարանքի, արձանագրական յիշատակարանների, պատկերաքանդակների, որմանկարչութեան մի թանգարան է սա։ Կը կամենայի ապրել և աշխատել երկա՜ր, երկա՜ր, մինչև որ կարողանայի մի ամբողջական գաղափար տալ այն գեղարուեստական փառաւոր անցեալի մասին, որի տխուր մնացորդներն ենք մենք այժմ։ Միջոցներ են պէտք աշխատելու, լուսանկարելու, որմանկարներն արտանկարելու, ճարտարապետական մասերը չափագրելու և գծագրելու, արձանագրութիւնները նոյնահանութեամբ կորստից փրկելու, զարդաքանդակների ժամանակագրութիւն կազմելու և սերտ աղերսը մանրանկարչութեան հետ ցուցադրելու, բայց ես խեղճ եմ, աղքատ, օրական ծախսերս հոգալ չեմ կարող և մտածում եմ չուտ հեռանալ։ Այստեղ պէտք է նստել մէկ երկու, երեք ամիս մասնագէտ աշխատակիցների հետ»։

(*) Համ. Երզնկեան, 64։

Նորա յաջորդն էր Յովհաննէս Բ. իւր եղբօրորդին, որ 1233 թուին չինեց Կայենոյ բերդը՝ տաճարի հետ միասին, «հրամանաւ քեռոյն իմոյ Իւանէի և որդոյ իւրո Աւագին և Շահնշահի որդոյ Զաքարէի»(*), իսկ սորա յաջորդ Յովհաննէս Գ-ի կարճատև եպիսկոպոսութիւնից յետոյ, որդի Աղսարթանայ, Կիւրիկեան Բագրատունիներից, Տ. Համազասպ (1243 – 1257 ըստ արձանագրութիւնների)(**), երկրորդ մեծ և գեղարուեստասէր անձը Հաղբատի առաջնորդների մէջ, որի կարևոր գործերն են երկյարկանի զանգակատունը (պատկ. 12) ՈՂԳ = 1244 թուին և Համազասպ կոչուած «մեծ և սքանչելի» ժամատունը ՉԲ – ՉԶ = 1253-1257 թ. (պատկ. 13)(***)։ Վերջին թուականին մեռաւ Համազասպը և նորան յաջորդեց Յովհաննէս Դ. Դոփեան՝ գիտութեան, արուեստի, վանքի պայծառութեան մեծ աշխատաւորներից մէկը։

Այսպիսի դիրքի եւ զարգացման համընթաց էր եւ մատենագրութեան ու ձեռագրական արուեստի զարգացումը Հաղ-

(*) Համ. Երզնկ. 72։
(**) Գանձ. 93։
(***) Գանձ, 93։ Համեմ. արձ. Երզնկեան. 51, 38։